

## ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՕՐԻՆԱԿ ՀԱՆԴԵՍ

Գիտության որևէ ոլորտ ներկայացնող պարբերականը ոչ միայն արտացոլում է կատարվող գիտական հետազոտությունների հիմնական ուղղությունները, հետաքրքրությունների շրջանակը, աշխատանքների որակն ու մակարդակը, այլ նաև մեծապես նպաստում է ոլորտի հետագա առաջընթացին, նոր ուղղությունների և ծրագրերի սկզբնավորմանն ու իրագործմանը: Միաժամանակ, նման պարբերականը կարող է վկայել այն հրապարակող հաստատության կարողությունների և որակների մասին:

Վերջին շրջանում՝ սկսած 2003 թվից, հայ լեզվաբանական մտքի զարգացման ընթացքի խոսուն վկաներից է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից հրապարակվող «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը: Գլխավոր խմբագրի՝ բանասիր. գիտ. դոկտոր, պրոֆ. Վ. Գ. Համբարձումյանի անուրանալի ջանքերի, գիտական լայնախոհության և նվիրվածության, խմբագրակազմի և աշխատակիցների քաջիմացության և բարձր պատասխանատվության շնորհիվ պարբերականը միշտ էլ աչքի է ընկել հրապարակվող նյութի ընտրության գիտական բարձր չափանիշներով, հարուստ և հետաքրքրական բովանդակությամբ, ճաշակով ու գեղեցիկ ձևավորմամբ:

Շնորհավորելով պարբերականի խմբագրակազմին 20-րդ համարի լույսընծայման կապակցությամբ՝ ցանկանում ենք նորանոր ձեռքբերումներ, գիտության աշխարհում «Լեզու և լեզվաբանություն» հանդեսի շարունակական առկայություն և անընդհատ վերելք:

**Վ. Լ. Կատվալյան**  
**ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի**  
**ինստիտուտի տնօրեն**